

ԵՐԵՎԱՆ, 2025

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ
Ֆինանսական հաշվետվությունների աուդիտ

«ԳԼՈՒԲ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

«Արդարադատության ակադեմիա»

ՊՈԱԿ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն

2023թ. դեկտեմբեր 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10



«ԳԼՈՒԲ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ

ՀՀ, ք.Երևան 0070, Ե.Քոչարի 19/8; հեռ.՝ (374 95) 48 00 47;
auditglobaudit@mail.ru; www.globaudit.am

ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ կառավարման խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ -ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2023թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և զուտ ակտիվի, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի համաձայն (ՀՀՀՀՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀԷՄՍԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՀՀՀՀՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածատվություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք՝ սխալի կամ խարդախության արդյունքում ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն,

ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների ու գործարքների ճշմարիտ ներկայացումը:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թրոփոնների մասին, որոնք հայտանաբերվել են իրականացված աուդիտի ընթացքում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը նաև այն մասին, որ առաջնորդվել ենք էթիկայի դրոյթներով՝ կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համապատասխան երաշխիքները, որտեղ որ կարելի է:

Ղեկավարության հետ քննարկված բոլոր դիտարկումներից ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀՄՀ): Այդ խնդիրները ներկայացվել են աուդիտորական եզրակացությունում, եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելվում հրապարակայնորեն դրանց բացահայտումը կամ, հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասներն ավելի մեծ կարող են լինել:

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ

.....
Տնօրեն Դ. Շարությունյան FCCA

10 փետրվար 2025թ.
ք. Երևան



.....
Աուդիտոր Կ. Շահինյան FCCA

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (ըստ բնույթի)

Հազար դրամ

	Ծնթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բյուջեի ֆինանսավորմամբ և հաճախորդներին մատուցված ծառայություններից հասույթներ	4	286,265	280,368
Աշխատակիցներին հատուցումներ		(239,515)	(198,832)
Նյութական ծախսեր		(889)	(1,128)
Մաշվածություն և ամորտիզացիա		(36,821)	(37,547)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(6,030)	(1,701)
Գրասենյակային ծախսեր	5	(15,696)	(18,381)
Վերապատրաստման ծախսեր	6	(10,576)	(12,841)
Պահուստներ	9	-	(4,395)
Այլ ծախսեր	7	(4,645)	(12,382)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		(27,907)	(6,839)
Ֆինանսական եկամուտ	8	813	1,400
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		(27,094)	(5,439)
Շահութահարկի գծով ծախս		(45)	(43)
Տարվա շահույթ/(վնաս)		(27,139)	(5,482)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		(27,139)	(5,482)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(27,139)	(5,482)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2025թ. փետրվարի 10-ին:

Ս. Առաքելյան
Ռեկտոր



Հ. Հայրապետյան
Գլխավոր հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ		2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնթ.		
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	10	1,010,013	1,043,736
		1,010,013	1,043,736
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	11	4,668	4,116
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	12	14,546	14,498
Դրամական միջոցներ և համարժեքներ	13	1,908	3,628
		21,122	22,242
Ընդամենը ակտիվներ		1,031,135	1,065,978
Ջուտ ակտիվներ (սեփական կապիտալ)			
Ջուտ ակտիվներ		250,453	276,461
		250,453	276,461
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	14	748,055	755,253
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		748,055	755,253
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	16,118	16,746
Պահուստներ	9	16,509	17,309
Հետաձգված եկամուտ		-	209
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		32,627	34,264
Ընդամենը պարտավորություններ		780,682	789,517
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		1,031,135	1,065,978

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Չուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

1 000 դրամ	Կուտակված հավելուրդ (պակասուրդ)	Ընդամենը զուտ ակտիվներ
Մնացորդն առ 01 հունվարի 2022թ.	281,590	281,590
Տարվա արդյունք	(5,129)	(5,129)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2022թ.	276,461	276,108
Տարվա արդյունք	(26,008)	(24,718)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	250,453	251,390

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
<<Բյուջեի ֆինանսավորմամբ>> ծառայությունների մատուցումից	395,680	363,030
Որպես գործակալ գումարների հավաքագրումից	-	2,148
Գործառնական գործունեությունից այլ ներհոսքեր	-	1,744
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	395,680	366,922
Արտահոսքեր գործառնական գործունեությունից		
Աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումներ	(171,569)	(156,908)
Ծառայությունների ձեռքբերումների դիմաց վճարումներ	(31,793)	(31,543)
Նյութերի, ապրանքների և այլ պաշարների ձեռքբերումների դիմաց վճարումներ	(7,665)	(5,078)
Գործուղումների հետ կապված վճարումներ	(2,047)	-
Հարկերի և պարտադիր վճարների հետ կապված արտահոսքեր	(102,453)	(91,825)
Որպես գործակալ ստացված գումարների գծով պարտավորությունների մարման հետ կապված վճարումներ	(78,590)	(73,392)
Գործառնական գործունեությունից այլ արտահոսքեր	(3,872)	(6,048)
Ընդամենը գործառնական գործունեությունից արտահոսքեր	(397,989)	(364,794)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերման, նորոգման և պահպանման հետ կապված արտահոսքեր	(189)	(532)
Ներդրումային գործունեության միջոցով օգտագործված զուտ դրամական միջոցներ	(189)	(532)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Տոկոսների վճարում	809	-
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	809	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(1,689)	1,569
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(31)	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	3,628	2,032
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	1,908	3,628

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 10-ից մինչև 23-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ -ն (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2013թ. դեկտեմբերի 13-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից ու ստացել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական:

Արդարադատության ակադեմիան հիմնադրվել է ՀՀ Նախագահի կողմից հաստատված իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի շրջանակում՝ ՀՀ Կառավարության 2013թ. սեպտեմբերի 13-ի N 990-Ա որոշմամբ 2013թ. մայիսի 2-ին Արդարադատության ակադեմիայի մասին ՀՀ օրենքի ընդունմամբ: Ակադեմիայի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ, Ակադեմիայի կառավարման խորհրդի որոշումներով, այլ իրավական ակտերով և համագործակցության հուշագրերով ու համաձայնագրերով:

Ակադեմիան կառավարվում և ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան, հիմնադրի, ակադեմիայի կառավարման խորհրդի և ակադեմիայի ռեկտորի գործառնությունների իրականացմամբ: Ակադեմիան ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ առանձին բյուջետային տողով:

Ընկերության գործունեության նպատակներն են՝

- Դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մեջ դատավորի կամ դատախազի պաշտոն զբաղեցնելու համար անհրաժեշտ հմտությունների ձևավորումը, մասնագիտական գիտելիքների ընդլայնումը.
- Դատավորների, դատախազների և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված՝ ակադեմիայի շրջանավարտ անձանց, դատական ծառայողների, դատախազության աշխատակազմում պետական ծառայողների, դատական կարգադրիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների հետևողական կատարելագործումը.
- Դատավորների, դատախազների, դատավորների և դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց կրթական ծրագրերի աստիճանական մերձեցումը, համատեղ կրթական ծրագրերի իրականացումը:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան 0054, Փիրումյանների 9:

Ընկերության աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակն 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է՝ 42 աշխատակից (2022թ. դեկտեմբերի 31-ին՝ 41 աշխատակից):

Ակադեմիան կառավարվում ու ղեկավարվում է ՀՀ օրենսդրությանը և ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան, հիմնադրի, ակադեմիայի կառավարման խորհրդի և ակադեմիայի ռեկտորի գործառնությունների իրականացմամբ:

Խորհրդի կազմը ներկայացված է ստուրն՝

Արսեն Այվազյան
Խորհրդի նախագահ

Արա Մկրտչյան
Խորհրդի անդամ

Արման Թովմասյան
Խորհրդի անդամ

Լիլիթ Սարգսյան
Խորհրդի անդամ

Անդրանիկ Մնացականյան
Խորհրդի անդամ

Մուշեղ Բաբայան
Խորհրդի անդամ

Արշալույս Մինասյան
Խորհրդի անդամ

Գարեգին Բեգոյան
Խորհրդի անդամ

Ռոբերտ Ադիլխանյան
Խորհրդի անդամ

Ռաֆայել Վարդանյան
Խորհրդի անդամ

Լիլիթ Գրիգորյան
Խորհրդի անդամ

Եղիազար Ավագյան
Խորհրդի անդամ

Վահե Ռաֆայելյան
Խորհրդի անդամ

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի համաձայն (ՀՀՀՀՍ):

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա գեղջված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՀՀՀՀՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից 17 ծանոթագրություն:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման հիմնական խնդիրներն են՝ ակտիվների ճանաչումը, դրանց հաշվեկշռային արժեքի որոշումը և դրանց հետ կապված մաշվածության (սպառման) գումարների որոշումը:

Հիմնական միջոցներ՝ նյութական ակտիվներ են՝

1) որոնք առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով շարունակական կամ պարբերաբար օգտագործելու համար,

2) որոնք ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում,

3) որոնց արժեքը սկզբնական ճանաչման պահին գերազանցում է հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կարգավորող լիազոր մարմնի կողմից սահմանված չափը, բացառությամբ համակարգչային տեխնիկայի, գրասենյակային կահույքի և հեռախոսների:

Կազմակերպությունը պետք է ճանաչի հիմնական միջոցի միավորի արժեքը որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

1) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն դեպի կազմակերպություն,

2) միավորի սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հողամասը և շենքերը առանձին ակտիվներ են և պետք է հաշվառվեն առանձին-առանձին, նույնիսկ երբ դրանք ձեռք են բերվում միասին:

Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի իր սկզբնական արժեքով:

Եթե հիմնական միջոցը ձեռք է բերվել չփոխանակվող գործարքով, դրա սկզբնական արժեքը պետք է չափվի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչվելուց հետո պետք է չափվի սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը՝ բացառությամբ հողամասերի և շենքերի:

Հողամասերը և շենքերը որպես ակտիվ ճանաչվելուց հետո պետք է հաշվառվեն վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրանց իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը (շենքերի մասով):

Հողամասերի և շենքերի վերագնահատման անցկացման ժամկետները և մեթոդաբանությունը սահմանում է հաշվապահական հաշվառումը կարգավորող լիազոր մարմինը:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	80 - 120 տարի
Կառուցվածքներ և փոխանցող հարմարանքներ	20 - 50 տարի
Մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ	10 - 30 տարի
Արտադրական, տնտեսական գույք և այլ	5 - 100 տարի

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվ՝ ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի ոչ դրամային ակտիվ, որն առկա է ավելի քան մեկ տարվա ընթացքում շարունակական կամ պարբերաբար օգտագործելու համար:

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես պետք է չափվի սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվը որպես ակտիվ ճանաչվելուց հետո պետք է չափվի սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան:

Բոլոր ոչ նյութական ակտիվները պետք է դիտարկվեն որպես սահմանափակ օգտակար ծառայություն ունեցող: Կազմակերպությունը պետք է որոշի ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կազմակերպությունը անկարող է կատարել ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության արժանահավատ գնահատում:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան պետք է հաշվարկվի գծային մեթոդով:

Ոչ նյութական ակտիվը պետք է ապաճանաչվի, երբ՝

1) այն օտարվում է (ներառյալ չփոխանակվող գործարքի միջոցով օտարումը), կամ՝

2) դրա օգտագործումից կամ օտարումից չի ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր	3 - 10 տարի
Լիցենզիաներ և արտոնագրեր	3 - 10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվներ	3 - 10 տարի

3.3 Պաշարներ

Պաշարներ՝ այն ակտիվներն են, որոնք՝

- 1) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրության ընթացքում օգտագործելու համար.
- 2) արտահայտված են հումքի կամ նյութերի ձևով՝ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու կամ բաշխելու համար.
- 3) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի կամ բաշխման համար կամ
- 4) արտադրության ընթացքում են՝ վաճառքի կամ բաշխման համար:

Ծառայություն մատուցող կազմակերպության դեպքում պաշարները ներառում են ծառայության ծախսումները, որոնց գծով կազմակերպությունը դեռևս չի ճանաչել համապատասխան հասույթը:

Կազմակերպությունը պետք է ճանաչի պաշարի արժեքը որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

- 1) հավանական է, որ այդ պաշարի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն դեպի կազմակերպություն,
- 2) պաշարի սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Պաշարները սկզբնապես պետք է չափվեն իրենց սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Եթե պաշարները ձեռք են բերվել չփոխանակվող գործարքով, դրանց սկզբնական արժեքը (ինքնարժեքը) պետք է չափվի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով:

Ծառայություններ մատուցող կազմակերպությունների դեպքում պաշարները ներառում են ծառայության ծախսումները, որոնց գծով կազմակերպությունը դեռևս չի ճանաչել համապատասխան հասույթը: Նման պաշարները չափվում են իրենց արտադրական ծախսումներով: Այդ ծախսումները բաղկացած են անմիջականորեն ծառայություն մատուցելու գործում զբաղված անձնակազմի աշխատուժի ծախսումներից՝ ներառյալ կառավարող տեխնիկական անձնակազմը, ինչպես նաև բաշխման ենթակա վերադիր ծախսումներից: Ծառայություն մատուցելու գործում չզբաղված անձնակազմի աշխատուժի ծախսումները չեն ներառվում պաշարների սկզբնական արժեքում (ինքնարժեքում): Բաշխման (իրացման) և ընդհանուր վարչական անձնակազմի հետ կապված աշխատուժի և այլ ծախսումները չեն ներառվում պաշարների սկզբնական արժեքում (ինքնարժեքում), այլ ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում:

3.4 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական գործիք՝ պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

Ֆինանսական ակտիվ՝ ակտիվ է, որը՝

- 1) դրամական միջոց է,
- 2) մեկ այլ կազմակերպության բաժնային գործիք է,
- 3) պայմանագրային իրավունք է՝

ա. մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու կամ՝

բ. մեկ այլ կազմակերպության հետ, իր համար պոտենցիալ նպաստավոր պայմաններով, ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ փոխանակելու,

4) պայմանագիր է, որը մարվելու է կամ կարող է մարվել կազմակերպության սեփական բաժնային գործիքներով, և որի ներքո կազմակերպությունը պարտավոր է կամ կարող է պարտավորվել ստանալու փոփոխական քանակությամբ իր իսկ բաժնային գործիքները:

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կազմակերպությունը պետք է սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափի սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումը:

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը պետք է ապաճանաչի այն և միայն այն դեպքում, երբ՝

1) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ մարվում են կամ

2) կազմակերպությունը այլ կողմին է փոխանցում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատուցները:

3.5 Պահուստները, պայմանական պարտավորությունները և պայմանական ակտիվներ

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պարտավորություն՝ կազմակերպության ներկա պարտականությունը՝ որպես կատարված (անցյալ) դեպքերի արդյունք, որի մարումն ակնկալվում է, որ կհանգեցնի կազմակերպությունից տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսքի:

Պարտավորեցնող դեպք՝ դեպք, որը հանգեցնում է իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք կազմակերպությունը չունի:

Իրավական պարտականություն՝ պարտականություն, որը բխում է՝

1) պայմանագրից (բացահայտորեն նշված լինելու կամ անուղղակիորեն պայմանագրի դրույթներից հետևելու միջոցով).

2) օրենսդրությունից կամ

3) օրենքների այլ գործադրումներից:

Կառուցողական պարտականություն՝ պարտականություն, որը բխում է կազմակերպության գործողություններից, որտեղ՝

1) անցյալի փորձով, հրապարակված քաղաքականությամբ կամ բավականաչափ որոշակի ընթացիկ հայտարարությամբ կազմակերպությունը ցույց է տվել այլ կողմերին, որ ստանձնելու է որոշակի պարտականություններ,

2) որպես արդյունք՝ կազմակերպությունը այդ կողմերից մի մասի շրջանում ստեղծել է հիմնավորված ակնկալիք, որ նա կատարելու է նշված պարտականությունները:

Պայմանական պարտավորություն՝

1) հնարավոր պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում կազմակերպության կողմից, կամ

2) ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը սակայն չի ճանաչվում հետևյալ պատճառներով՝

ա. հավանական չէ, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսք կամ

բ. պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական ակտիվ՝ հնարավոր ակտիվ՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում կազմակերպության կողմից:

Անբարենպաստ պայմանագիր՝ պայմանագիր, որով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսումները գերազանցում են այդ պայմանագրից ակնկալվող ստացվելիք տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը:

3.6 Չփոխանակվող գործարքներից հասույթ

Հասույթն առաջանում է և փոխանակվող, և չփոխանակվող գործարքներից, այնուամենայնիվ, պետության և հանրային հատվածի կազմակերպությունների հասույթների հիմնական մասը սովորաբար ստացվում է չփոխանակվող գործարքներից, ինչպիսիք են.

1) հարկերը,

2) տրանսֆերտները (կանխիկ կամ անկանխիկ)՝ ներառյալ դրամաշնորհները, պարտքի ներումը, տույժերը և տուգանքները, ժառանգությունը, նվերները, նվիրատվությունները, ինչպես նաև անհատույց ապրանքները և ծառայությունները:

Հասույթ՝ հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է զուտ ակտիվների (սեփական կապիտալի) աճի, բացառությամբ սեփականատերերի կողմից ներդրումների հետևանքով զուտ ակտիվների (սեփական կապիտալի) աճի:

Փոխանակվող գործարքներ՝ գործարքներ, որոնց դեպքում մեկ կազմակերպություն ստանում է ակտիվներ կամ ծառայություններ, կամ մարում է պարտավորություններ, և դրանց դիմաց, որպես փոխանակում, մեկ այլ կազմակերպությանը ուղղակիորեն տալիս է դրանց մոտավորապես հավասար արժեքը (հիմնականում դրամական միջոցների, ապրանքների, ծառայությունների կամ ակտիվների օգտագործման տեսքով):

Չփոխանակվող գործարքներ՝ գործարքներ, որոնք փոխանակվող գործարքներ չեն: Չփոխանակվող գործարքի դեպքում կազմակերպությունը մեկ այլ կազմակերպությունից կամ ստանում է արժեք՝ առանց մոտավորապես հավասար արժեքը որպես փոխանակում ուղղակիորեն տալու, կամ տալիս է արժեք՝ առանց մոտավորապես հավասար արժեքը որպես փոխանակում ուղղակիորեն ստանալու:

Փոխանցվող ակտիվների գծով ամրագրված դրույթներ՝ օրենքներով կամ կարգավորող օրենսդրությամբ կամ պարտավորեցնող համաձայնությամբ սահմանված դրույթներ, որոնք կիրառվում են հաշվետու կազմակերպությունից դուրս կազմակերպությունների կողմից փոխանցվող ակտիվի օգտագործման նկատմամբ:

Փոխանցվող ակտիվների գծով պայմաններ՝ ամրագրված դրույթներ, որոնք սահմանում են, որ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը պահանջվում է սահմանված կարգով սպառել ստացողի կողմից, կամ ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը պետք է հետ վերադարձվի փոխանցողին:

Փոխանցվող ակտիվների գծով սահմանափակումներ՝ ամրագրված դրույթներ, որոնք սահմանափակում կամ ուղղորդում են այն նպատակները, որոնց համար փոխանցվող ակտիվը կարող է օգտագործվել, սակայն չեն սահմանում, որ ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար

պոտենցիալը պահանջվում է հետ վերադարձնել փոխանցողին՝ ակտիվը սահմանված կարգով չօգտագործելու (չսպառելու) դեպքում:

Հարկեր՝ պետության համար հասույթ ապահովելու նպատակով հանրային հատվածի կազմակերպություններին օրենքով և/կամ կարգավորող օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր վճարվող կամ վճարվելիք տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ: Հարկերը չեն ներառում օրենսդրության խախտման համար կիրառվող տույժերը և տուգանքները:

Տրանսֆերտներ՝ չփոխանակվող գործարքներից ապագա տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի ներհոսքը՝ բացառությամբ հարկերը:

Տույժեր և տուգանքներ՝ հանրային հատվածի կազմակերպությունների կողմից ստացված կամ ստացվելիք տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ՝ սահմանված դատարանի կամ օրենքը կիրարկող այլ մարմնի կողմից՝ որպես օրենքի կամ կարգավորող օրենսդրության խախտման հետևանք:

Հարկվող դեպք՝ դեպք, որը օրենսդիր, գործադիր կամ այլ մարմնի կողմից սահմանված կարգով սահմանվել է որպես հարկվող:

Հարկային համակարգի միջոցով վճարվող ծախսեր՝ այն գումարներն են, որոնք հասանելի են բենեֆիցիարներին, անկախ այն հանգամանքից՝ նրանք հարկեր վճարում են, թե՛ ոչ:

3.7 Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են այնպիսի հոդվածներ, ինչպիսիք են՝

1) աշխատավարձերը,

2) կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են՝ վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները), երբ ակնկալվում է, որ բացակայությունները տեղի կունենան այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունը,

3) արդյունքների հետ կապված պարգևավճարները, որոնք ենթակա են վճարման այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունը,

4) ոչ դրամային հատուցումները (ինչպիսիք են՝ բուժսպասարկումը, բնակարանով և ավտոմեքենայով ապահովումը, անվճար կամ մասնակի վճարումով ապրանքների կամ ծառայությունների տրամադրումը) ընթացիկ ժամանակաշրջանում աշխատող աշխատակիցների համար:

Երբ աշխատակիցը հաշվառման ժամանակաշրջանի ընթացքում կազմակերպությանը մատուցել է ծառայություն, կազմակերպությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղջված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, պետք է ճանաչի՝

1) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղջված գումարը, կազմակերպությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների նվազեցման կամ դրամական միջոցների վերադարձի,

2) որպես ծախս՝ բացառությամբ այն դեպքերի, երբ սույն ստանդարտի մեկ այլ բաժնով պահանջվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ:

Կազմակերպությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների՝ տարբեր պատճառներով առաջացող բացակայությունները, ներառյալ՝ տարեկան արձակուրդը, հիվանդությունը, կարճաժամկետ անաշխատունակությունը, երեխայի խնամքը, ռազմատուժական հավաքները և այլն:

Կազմակերպությունը պետք է ճանաչի պարզևավճարներից ակնկալվող ծախսումները միայն այն ժամանակ, երբ՝

1) կազմակերպությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք,

2) պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ կազմակերպությունը ոչ մի իրատեսական այլընտրանք չունի վճարում չկատարելու:

4. «Բյուջեի ֆինանսավորմամբ» և հաճախորդների ծառայությունների մատուցումից հասույթներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Պետական բյուջեից ֆինանսավորմամբ ծրագրերի իրականացումից հասույթ	234,127	215,720
Բյուջեից բնամթերային ձևով պայմանագրով ստացված ամորտիզացվող ակտիվների գծով հասույթ	6,539	23,783
Հաճախորդներին մատուցված ծառայություններից հասույթ	40,335	28,801
Կազմակերպություններից առանց պայմանների կատարման պահանջի (անհատույց) ստացված ակտիվների գծով հասույթ, չփոխանակվող գործարքներից այլ հասույթ	3,771	11,508
Աշխատավարձի պահուստի նվազում	800	-
Այլ ներհույքեր	693	556
	286,265	280,368

5. Գրասենյակային ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Գրասենյակային ծախսեր	(3,669)	(4,739)
Բանկային և ապահովագրական ծախսեր	(71)	(72)
Կոմունալ ծախսեր	(6,447)	(7,878)
Հեռահաղորդակցության ծախսեր	(996)	(889)
Խորհրդատվական ծախսեր	(650)	(667)
Պահնորդական ծառայության ծախսեր	(3,863)	(4,136)
	(15,696)	(18,378)

6. Վերապատրաստման ծառայություններ, ուսուցման ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դատական կարգադրիչների, դատավորների, քննիչների	(7,054)	(9,912)

հատուկ ուսուցում		
Դատախազների վերապատրաստում	(3,522)	(2,929)
	(10,576)	(12,841)

7. Այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների նորոգման և սպասարկման ծախսեր	(2,869)	(3,692)
Չփոխհատուցվող հարկեր	(48)	(25)
Ծառայություններ	(1,665)	(3,320)
Այլ ծախսեր	(63)	(5,345)
	(4,645)	(12,382)

8. Այլ եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ	809	1,208
Վերահաշվարկից այլ եկամուտ	-	192
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ	4	-
	813	1,400

9. Պահուստներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադար -ձում	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	16,509	-	800	17,309

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադար -ձում	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	17,309	4,395	-	12,914

10. Հիմնական միջոցներ

1'000 դրամ	Շենքեր	Հողամասեր	Փոխանցող հարմարանքներ	Մեքենաառքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Առ 01 հունվար 2022թ.	1,024,987	-	-	91,662	-	132,534	9,119	1,258,302
Ավելացում	-	-	-	498	-	28	1,831	2,357
Նվազեցում	-	-	-	(315)	-	(102)	-	(417)
Վերադասակարգում	(196,350)	196,350	-	-	-	-	-	-
Մյուսի ճշգրտում	-	1,650	-	-	-	(18)	219	1,851
Առ 31 դեկտեմբեր 2022թ.	828,637	198,000	-	91,845	-	132,442	11,169	1,262,093
Ավելացումներ	-	-	-	-	-	3,286	-	3,286
Նվազեցումներ	-	-	-	-	-	-	-	-
Վերադասակարգում	-	-	276	(90,392)	3,000	97,160	(10,044)	-
Մյուսի ճշգրտում	-	-	-	(1,453)	-	-	-	(1,453)
Առ 31 դեկտեմբեր 2023թ.	828,637	198,000	276	-	3,000	232,888	1,125	1,263,926
Առ 01 հունվար 2022թ.	(37,089)	-	-	(51,888)	-	(88,662)	(5,065)	(182,704)
Ավելացումներ	(7,084)	-	-	(11,269)	-	(17,674)	(1,520)	(37,547)
Նվազեցումներ	-	-	-	315	-	102	-	417
Վերադասակարգում	-	-	-	-	-	-	-	-
Մյուսի ճշգրտում	1,678	-	-	(1,201)	-	(583)	1,583	1,477
Առ 31 դեկտեմբեր 2022թ.	(42,495)	-	-	64,043	-	(106,817)	5,002	218,357
Ավելացումներ	(7,082)	-	-	-	-	(28,924)	(816)	(36,822)
Նվազեցումներ	-	-	-	-	-	-	-	-

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ Ֆինանսական հաշվետվություններ 2023թ. դեկտեմբերի 31

Վերադասակարգում	-	-	(88)	62,778	(3,000)	(64,480)	4,790	-
Միայն ճշգրտում	-	-	-	1,265	-	-	-	1,265
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	(49,577)	-	(88)	-	3,000	(200,221)	(1,028)	(253,914)
Զուտ հաշվեկշռային արժեք								
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	786,142	198,000	-	27,802	-	25,625	6,167	1,043,736
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	779,060	198,000	188	-	-	32,667	97	1,010,012

11. Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նյութեր	3,125	2,624
Շինանյութեր	2	41
Փոքրաթիվ կամ արագամաշ առարկաներ	649	358
Այլ կյութեր	892	1,093
	4,668	4,116

Պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

12. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր հաճախորդներին մատուցած ծառայությունների գծով	3,150	-
Տրված կանխավճարներ	170	209
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	10,828	14,289
Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով	398	-
	14,546	14,498

13. Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	826	826
Բանկային հաշիվներ	1,082	2,802
	1,908	3,628

14. Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բյուջեից բնամթերային ձևով պայմանով ստացված այլ հիմնական միջոցների գծով հետաձգված հասույթներ	748,055	755,253
	748,055	755,253

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	380	236
Հաճախորդներից կանխավճարներ	-	2,044
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	2,688	-

Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	13,050	14,466
	16,118	16,746

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվառվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

16. Իրավական պարտավորվածություններ

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ընդգրված չէ որևէ դատական գործընթացում, որոնք կարող են էականորեն ազդել ֆինանսական հաշվետվությունների վրա:

17. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	40,985	33,347
	40,985	33,347

18. Համեմատական տեղեկատվության վերաներկայացում

Հաշվետու տարում բացահայտվել են նախորդ տարվան վերաբերող չափման և ներկայացման սխալներ: Սխալների ուղղումները ունեցել են հետևյալ ազեցությունը.

ա) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	31.12.2022	Ճշգրտում, ան/(նվազում)	հազար դրամ
	Նախկինում ներկայացված		31.12.2022
Հիմնական միջոցներ	1,040,408	3,328	1,043,736
Հետաձգված հարկային ակտիվ	3,430	(3,430)	-
Պաշարներ	3,063	1,053	4,116
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	760	13,738	14,498
Զուտ ակտիվներ	276,108	353	276,461
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	2,410	14,336	16,746